

ՏԻՐՈՒՆԻ

ՀԱՆԳԻՍՏ ՍԱՀԱԿ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ

Ծնած է Պաղտատ, 1924 Յունուարի 1ին: Տասներորդ կենդանի զաւակն էր քնիկ Զէյթունցի Միսաֆ եւ Մարգարիտ Գալայնեաններու: Իր ինքնը եղբայրները կը մեռնին Մեծեղեռնին եւ տարագրութեան ցամաքում վրայ, եւ ծնողքը զինքն յաւիտեանապէս չկորսնցնելու մտահոգութեամբ՝ կ'ուխտեն երուսաղէմ տանիլ զայն եւ նուիրել հայոց Պաշտպան Սուրբին՝ Սուրբ Գլխադիր Առաքեալին:

Ծնելէն երեք ամիսներ ետք, կը գաղթեն Պաղեստին՝ վերջնականապէս հաստատուելով երուսաղէմի Հայոց Վանքին մէջ: Նախնական ուսումը կը ստանայ Սրբոց Թարգմանչաց վարժարանին մէջ, ուրկէ 1937ին շրջանաւարտ կ'ելլայ: Ապա կը յաճախէ տեղոյս Ֆրէրներու Գոլէնը, որուն շրջանը կ'աւարտէ փայլուն յաջողութեամբ: Կը մասնակցի *Palestinian Metriculation Examination*-ին, Հայերէն, Անգլերէն եւ Մաթեմատիքի նիւթերուն մէջ արձանագրելով *Distinction* արդիւնքներ: Վարժարանէն նաեւ կը ստանայ մեքենագրութեան եւ հաշուակալութեան վկայականներ:

1939ին՝ հայրը՝ Միսաֆ կը մեռնի սրտի հիւանդութեամբ: Իսկ մայրը՝ Մարգարիտ, 7 Օգոստ. 1942ին յաւետ կը բաժնուի աշխարհէն:

1942-1947 կը պաշտօնավարէ երուսաղէմի Անգլիական *MIDDLE EAST LAND FORCES*ի *REGIMENTAL PAY OFFICE*ին մէջ որպէս բարտուղար-հաշուակալ, որմէ ետք, մինչեւ Անգլիական կառավարութեան հոգատարութեան վերջ տրուիլը (Մայիս 15, 1948), կը պաշտօնավարէ տեղոյս Պարփլէյզ Պանքին մէջ: 1949ին կը նշանակուի Ս. Յակոբեանց Մայր Տաճարի դպրապետ: 1951ին

կ'ամուսնանայ Յոպպէէն երուսաղէմ գաղթած ընտանիքի մը առջիննկ աղջկան - Սիրարփի Սանթուրեան հետ: Նոյն տարւոյ Մարտին, Պր. Սահակ կ'ընդունուի Կիւլպէնկեան Մատենադարանի որպէս բարտուղար, միեւնոյն ատեն կը ստանձնէ Պատրիարքարանի ելեւմտից դիւանի հաշուակալի պաշտօնը: Բացի այս պաշտօններէն՝ ժառանգաւորաց եւ Ս. Թարգմանչաց վարժարաններուն մէջ կը դասաւանդէ երաժշտութեան, հայերէն լեզուի եւ Մաթեմատիքի նիւթերը: Տարիներով դեկավարած է ժառ. Վարժարանի սաներու երգչախումբը, նաեւ Ս. Թարգմանչաց վարժարանի երկսեռ երգչախումբը: Հայ երիտասարդաց Միութեան 55 ամեակին առթիւ, 21 Նոյեմբեր 1992ին կը պարգևատրուի Հ.Ե.Մ.ի «Պատու» Շքանշանով եւ Նորին Ս. Օծուքին Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակով եւ Ս. Ներսէս Շնորհալիի շքանշանով:

Կիրակի, 1994 Օգոստոս 21ին, երկարատեւ հիւանդութեան տառապանքէն վերջ, ողբացեալը՝ առ յաւետ կը բաժնուի այս աշխարհէն: Թաղման արարողութիւնը կը կատարուի Երկուշաբթի 22 Օգոստոսին, Մայր Տաճարի մեծ առեանին մէջ: Թաղման արարողութեան կը նախագահէր եւ դամբանականը խօսեցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանը: Ներկայ էին համարեայ ամբողջ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, Պատրիարքարանի պաշտօնեաներն ու ժողովուրդը: Մարմինը առաջնորդուեցաւ դէպի փրկչի ազգային գերեզմանատունը: Դագադին առջեւէն կ'երթային Հ.Ե.Մ.ի սկառտախումբը հնչեցնելով սուգի թմբուկները, ժառանգաւոր սաներն ու

միաբանութիւնը որոնք կ'երգէին «Աշխարհ Ամենայն»-ը: Մարմինը ամփոփուեցաւ Արարայի յուշարձանին մօտ: Իր կուսակցական բարեկամներէն Յակոբ Անդրեասեան կարդաց իր սիրեցեալ ընկերոջ դամբանականը գերեզմանատան մէջ: Պր. Սահակ Գալայեանի մահուան տխուր գոյժը տրտմեցուց բոլոր անոնց որոնք զինքն կը նանչնային իրրեւ ժրաջան, գործունեայ ուխտուած գաւազն Սրբոց Յակոբեանց Վանքին: Ամէն անգամ որ մարդ կը բաժնուի այս աշխարհէն առ յաւիտ, միտքս կու գայ Վահան Թէֆեանի խօսքը. «ամէն մարդ որ կը մեռնի, երկու փոսեր կը բանայ, մէկը՝ այն փոսն է որուն մէջ ինք յաւերժօրէն պիտի ննջէ, իսկ երկրորդը՝ իրեն հարագատ մարդերու սրտերուն մէջ» ...:

Երուսաղէմի հայոց Պատրիարքութիւնը, պատրիարքարանի պաշտօնեաները, իր գործընկեր ուսուցիչները եւ համայն գաղութը իրեն հարագատներուն եւ կողակցին կողքին խորապէս սգացին կորուստը բազմադիւն տաղանդներով ի Պր. Սահակին: Բազմաշնորհ մարդ մըն էր: Ու ես անհուն հրճումանքով ունիմ զինք մօտէն նանչնալու, նախ՝ իրրեւ իմ ուսուցիչը՝ որպէս եկեղեցական երաժշտութեան դասատու, եւ ապա որպէս բարեկամ: Զնայած մեր տարիքի տարբերութեան, ան երբեք ցոյց չէր տար իր գերակայութիւնը, որովհետեւ (եւ վստահ եմ բոլորին հանդէպ եւս) ունէր հօր մը քաղցրութիւնը եւ ուսուցչի մը համեստութիւնը: Տուաւ ինչ որ ունէր: Սորվեցուց ինչ որ ինք ժառանգած էր ուրիշներէն: Իրական ուսուցչի մը դերը կատարող անգերագանցելի օրինակը եղաւ Պր. Սահակը:


Բոլորին բարեկամանալու ներքին մղումը (ինչ որ իր հոգիին արտայայտութիւնն էր) կու գայ իր մանկութեան տարաբախտ օրերէն: Պարապ տեղ չէ ըսուած որ «բարեկամները անթառամ

ծաղիկներն են կենաց պարտէզին»:

Պր. Սահակը արժէք մը ըլլալէ աւելի արժանիք մըն էր, որ իր ունեցած տաղանդը վերածեր էր տասի: Հաստատօրէն Պր. Սահակը մէկն էր արժանիքի տէր մարդերէն: Իր մօտ կէս դար հաշուող գործունէութիւնը հայոց Պատրիարքութեան ներս իսկապէս գնահատելի է եւ շնորհակցիչ: Բազում պաշտօններու տէր անճաւորութիւն մըն էր ան: Մատենադարանի ֆարտուղար, Պատրիարքարանի հաշուակալ, ելեւտական դիւանի ֆարտուղար, եկեղեցական երաժշտութեան ուսուցիչ ժառանգաւորաց վարժարանի, դպրապետ եւ խմբավար Ս. Յակոբեանց Մայր Տաճարի: Պիտի չխօսիմք իր բացառիկ կարողութիւններուն մասին, որովհետեւ ան ծանօթ է մեզի իր նուիրում-ծութեամբ եւ խնամածութեամբ, իր գործունէութեամբ եւ իր բազմաշնորհ տաղանդներով: Եկեղեցասիրութիւնը եւ ազգասիրութիւնը իր մէջ կանուխ տարիքէն մարմնաւորուած էին: Եւ անոնք են որ ամրապնդեցին զինքն գալիք տարիներուն ի գործ դնելու իր լաւագոյնը յօգուտ Սուրբ Աթոռին եւ գաղութին: Ան իր ծառայութիւնը մատուցեց լաւագոյն կերպով եւ շատ շատերուն լաւ օրինակ հանդիսանալով: Մեր սուգի կողքին նաեւ արդար ուրախութիւնը ունեցանք (եւ այդ կը պարտինք Մեր Պատրիարք Սրբազան Հօր ջանքերուն) որ իր կեանքի մայրամուտին արդար գնահատանք մը ստացաւ անակնկալ պարգեւատրումովը Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. ի շնորհած Սրբատառ կոնդակին եւ Ս. Ներսէս Շնորհալիի շքանշանին: Այս տխուր առիթով, հայ Երուսաղէմի Պատրիարքութիւնը եւ պաշտօնէութիւնը իրենց խորագգած ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալին կողակցին, հարագատներուն եւ ընտանեկան պարագաներուն:

Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի «Պր. Սահակ»:

ԲԱԳՐԱՏ ԱՔԼ. ՊՈՒԻՃԷՔԵԱՆ



ՍԱՀԱԿ ԳԱԼՍՅՃԵԱՆ
1924-1994